

ոչ խնայեն ի սէրն Երուսաղէմայ, ոչ թէ արք,<sup>135</sup>  
այլ եւ կանայք նոցա եւ այրիքն հանէին  
զգինտս ականջաց, զատառանջանս եւ մա-  
նեակս ի պարանոցաց, զոսկի մատանիս եւ  
զարծաթէ կոճակս կտրեն եւ տան ի սէրն  
Գրիստոսի:

140

Կայր եւ ջուղացի քահանայ մի Մկրտիչ  
անուն<sup>2</sup>, ի մեծ եւ ի փառաւոր ազգէ, որ դա-  
տէր եւ աշխատէր յիւր աշխարհն բոլոր տա-  
րին եւ բերէր յԵրուսաղէմ հազար զուռուչ եւ  
աւելի՛ ի Սպահանու:

145

Կային եւ ի սուրբ Փրկիչ կանայք եւ այրիք:  
Եւ ի Հրեշտակապետ հաւատաւոր կանայք եւ  
պատուք, որ ցայդ եւ ցերեկ ազօթէին ի պարք  
եւ ի ճգնութիւնս. եւ չորապար դոլով աշխա-  
տէին, դատէին. ոմանք պաշախ ժողովէին,<sup>150</sup>  
այլք մանէին վուչ, եւ վարձն վանաց տային:  
Եւ կէսք քաղէին ձիթոյ պտուղ եւ աղէին. զի  
Երուսաղէմայ բոլորն սարուձոր գէյթուն է. եւ  
երբ ուխտաւորք դային, ծախէին նոցա եւ  
դրամն տային վանաց: Այլք քահանէին կամ<sup>155</sup>  
զօրայս ժողովէին կամ հնձէին կամ այլ ծա-  
ռայութիւն առնելով. ամենայնիւ զմարմինս

135 յԵրուսաղէմայ այ(1):

<sup>2</sup> Գրեզոր Գարանաղցի նոյնպէս կը վկայէ, կոչե-  
լով «Տէր Մկրտիչ երէց ամենազովելի, սրբատէր եւ  
բազմազութ Ձուղայեցի» (Յիշատակարան Աստուածա-  
շունչի, էջ 602): Կանգնած է Մ. Թորոս Եկեղեցւոյ մէջ  
1601ին խաչքար մը, որ արձանադրութիւնս կը կրէ.  
ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱԶԸՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ ՄԿՐՏԻՉ, ՕՇԱՆԷՍ,  
ՍՈՒԼԹԱՆՓԱՇԱ, ՊԱՊԱՋԱՆ. ԹՎ. ԹԾ. Աղանուհի,  
Միարանք, 302: